# ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆԻ «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

*Նոյեմբերի 14-ին ԱրՊՀ-ում փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, փ.գ.թ. Աննա Հակոբյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Էմանուել Մակրոնի «Հեղափոխություն» գրքի քննարկումը, որին մասնակցում էին դասախոսներ և ուսանողներ: Մասնակիցները ներկայացրել և վերլուծել են գրքի 16 գլուխները:*



«Հեղինակը հեղափոխություն է համարում համաշխարհայնացումը, տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի ընդհանրացումը: Ընդգծում է խոր ճգնաժամային երևույթները, որոնք պահանջում են նոր հեղափոխություն համաշխարհային մասշտաբով: Հեղինակի խնդիրն է նպաստել ոչ միայն Ֆրանսիայի վերակառուցմանը, այլև ամբողջ աշխարհին ուղղություն ցույց տալը»,- ասել է փ.գ.թ. Շահեն Աբրահամյանը՝ նշելով, որ հեղինակը, ցավոք, գրքում չի ներկայացնում, թե կոնկրետ ինչ քայլեր պետք է ձեռնարկել:

Դասախոսները կարևորել են նման քննարկումների հաճախակի կազմակերպումը, որոնք նպաստում են նոր գաղափարների ծանոթանալուն, ուսանողների բանավոր խոսքը զարգացնելուն, նոր ստեղծվող մասնագիտական գրքերին հաղորդակցվելուն:

Նշենք, որ գրքում Ֆրանսիայի պատմության ամենաերիտասարդ նախագահ Էմանուել Մակրոնը պատմում է իր ծագման և քաղաքական հայացքների մասին: Նա ներկայացնում է փոփոխվող նոր աշխարհում Ֆրանսիայի ապագայի վերաբերյալ իր պատկերացումները:

# ԿԱՅԱՑԵԼ Է ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ



*ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի և ՈւԽ համատեղ ջանքերով Ուսանողության միջազգային օրվան ընդառաջ կազմակերպվել էր հրաձգության համալսարանական մրցույթ:*

Մրցույթին մասնակցել են համալսարանի հինգ ֆակուլտետների հավաքական թիմերը, որոնք մրցել են խմբային և անհատական մրցապայքարում: Մրցույթի արդյունքներով թիմային պայքարում մրցանակային առաջին տեղը զբաղեցրել է մանկավարժության և սպորտի, երկրորդը՝ տնտեսագիտության, երրորդը՝ բնագիտականի թիմը: Անհատական պայքարում առաջին տեղը զբաղեցրել է ՆԶՊ 1-ին կուրսի ուսանող Գոռ Օհանջանյանը, երկրորդ տեղը՝ հայոց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Մարգարյանը, երրորդ տեղը՝ ֆիզիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արմեն Գաբրիելյանը:

«Նման միջոցառումների կազմակերպումը կարևորում ենք նրանով, որ ուսանողության շրջանում արմատավորվում է առողջ ապրելակերպն, ու միաժամանակ դաստիարակում կոփված երիտասարդներ»,- ասել է ՆԶՊ և ՖԴ ամբիոնի վարիչ Սուսաննա Հայրապետյանը: ՈւԽ նախագահ Դիանա Խաչատրյանն էլ ընդգծել է նման միջոցառումների կազմակերպման կարևորությունը՝ ուսանողների մարզական հմտությունների կատարելագործման առումով. «ֆիզիկապես պատրաստված ուսանողը հայրենիքի վաղվա հուսալի պաշտպանն է»:



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Մեր հասցեն՝
Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Դու ես կերտում քո ժամանակը:
Համոզված եղիր՝ տարիներ հետո
Քո կերտած ժամանակը լավն է լինելու...

Քո ժամանակը

№ 09
ՆՈՅԵՄԲԵՐ
2018

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

# Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր   Տ Ո Ն Դ ,   Ո Ւ Ս Ա Ն Ո ՜ Ղ

***Նոյեմբերի 17-ը նշվում է որպես Ուսանողների միջազգային օր: Օրվա առթիվ Արցախի Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղի են ունեցել միջոցառումներ՝ արժևորելով ու կարևորելով ուսանողության դերը երկրի զարգացման գործում: Ուսանողների միջազգային օրվա առթիվ շնորհավորանքներ և բարեմաղթանքներ են հղել նաև մեր ուսանողները:***



*Այսօրվա ուսանողը յուրաքանչյուր պետության զարգացման վաղվա երաշխավորն է, ուստի ներկայիս ուսանողության ձգտումներով ու երազանքներով է պայմանավորված Արցախի ապագան: Հպարտ եմ, որ սովորում եմ Արցախի պետական համալսարանում: Համալսարան, որն իր համեստ հնարավորություններով փորձում է անհնարինը հնարավոր դարձնել՝ ի շահ ուսանողի և մեր երկրի ապագայի: Շնորհավորում եմ բոլորիս՝ տոնի կապակցությամբ, մաղթում հաջողություններ ուսման մեջ, լավատեսություն, եռանդ ու կամք՝ նպատակների իրականացման ճանապարհին:*

***Կարինե Բաղդասարյան***
***ֆիզիկա, 3-րդ կուրս***



*Սիրելի՛ ուսանողներ, ի սրտե շնորհավորում եմ ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ: Կիրթ և բանիմաց ուսանողը ապագա մասնագետ է, որի մասնագիտական որակներով պայմանավորվում է երկրի ապագան, ուստի այս գործում կարևոր է յուրաքանչյուրիս ընտրած մասնագիտությունը: Համառենք մեր երազանքներն ի կատար ածելու ճանապարհին՝ հանուն մեր երկրի լուսավոր ապագայի:*

***Անգելինա Միրզոյան***
***ՏՄՄ, 3-րդ կուրս***

*Ուսանողի համար ամենադժվարը ստուգարք-քննությունների շրջանն է, սակայն դրանով չէ, որ սկսվում կամ ավարտվում է ուսանողական կյանքը: Ուսանողական ակտիվ առօրյայի*



*համար այսօր ստեղծված են լավագույն պայմաններ: Մաղթում եմ լիարժեք վայելել ուսանողական ամեն մի օրը, օգտվել ընձեռված հնարավորություններից՝ ոչ միայն քաղաքացի, այլև մասնագետ դառնալու ճանապարհին:*

***Աննա Հարությունյան***
***ՏՄՄ, 2-րդ կուրս***

*Հանդիսանալով հասարակության շարժիչ ուժը և ներկայացնելով նրա եռանդուն էությունը՝ ուզում եմ, որ մենք կառուցենք մեր երազանքների հայրենիքը: Օրվա կապակցությամբ ընկերներիս մաղթում եմ հավատա-*



*րիմ մնալ ազգային արժեքներին, մեր մարդկային և մասնագիտական որակներով նպաստել հայրենիքի պաշտպանությանը: Իղձերի իրականացում ձեզ և նորանոր հաջողություններ ուսման մեջ: Թող խաղաղությունը հարատևի Արցախ աշխարհում, և ոչ ոք այլևս կորստի զգացում չունենա: Թող շարունակական լինեն մեր բոլոր հաղթանակները:*

***Արփինե Մկրտչյան***
***Մանկավարժություն և մեթոդկա, 4-րդ կուրս***

*Սիրելի՛ ուսանողներ, սրտանց շնորհավորում եմ ուսանողների միջազգային օրվա առթիվ, ցանկանում եմ հաստատակամություն գիտելիքների ծեռքբերման ճանապարհին, ինքնավստահություն*



*սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ: Միայն այս դեպքում կարող ենք պայծառ և հուսալի դարձնել մեր երկրի վաղվա օրը: Շնորհավո՛ր:*

***Անգելինա Մկրտչյան***
***Տեղեկ. տեխ., 1-ին կուրս***



*Սիրելինե՛րս, ի սրտե շնորհավորում եմ ողջ ուսանողությանը՝ տոն օրվա կապակցությամբ: Մաղթում եմ, որ ուսանողության տարիներին ստացած գիտելիքները ծառայեցվեն նպատակների իրականացմանը: Ազգի ապագան պետք է փնտրել երիտասարդության ափերում:*

***Անի Հակոբյան***
***Տեղեկ. տեխ., 3-րդ կուրս***



*Սիրելի՛ ընկերներ, ցանկանում եմ ուսանողական անմոռաց տարիներ, խելահեղ գաղափարներ և համարձակություն՝ դրանք իրականացնելու համար: Դա է գունեղ դարձնում ուսանողական առօրյան: Լինենք միասնական և հավատարիմ այն արժեքներին, որ ուսանողների միջազգային օրվա խորհուրդն է կրում իր մեջ:*

***Նոննա Շաֆերյանց***
***Մաթեմատիկա, 3-րդ կուրս***

*Շնորհավորելով ուսանող ընկերներիս՝ կմաղթեի ծեռքբերումներ ուսումնագիտական նախաձեռնություններում, ինչ-*



*պես նաև աշխատասիրություն, լավատեսություն և կամք՝ դրանք գործնականում իրականություն դարձնելու համար:*

*Գիտելիքներով զինված մարդն ինքնին արժեք է ցանկացած իրավիճակում, ուստի եկեք հնարավորինս զինված լինենք՝ մասնակցելով մեր երկրի պաշտպանությանն ու ապահով երկրի կառուցմանը: Համոզված եմ՝ մենք արժանապատվորեն կհաղթահարենք մեզ տրված բոլոր փորձությունները:*

***Անուշ Դանիելյան***
***Պատմություն, 2-րդ կուրս***



*Շնորհավորում եմ բոլորիս տոնը, ցանկանում եմ հաստատուն կամք, հաջողություններ ուսման մեջ և համարձակ ծեռնարկումներ՝ ի նպաստ մեր երկրի և մեր հասարակության: Նաև հորդորում եմ լավագույնս օգտագործել ներկայիս հնարավորությունները, ծեռք բերել շատ գիտելիքներ, մասնակցել ուսանողական կյանքի ակտիվացմանը:*

***Սոֆիա Ասրյան***
***Ֆինանսներ 3-րդ կուրս***

*Շնորհավորում եմ բոլոր*



*ուսանողների տոնը և ցանկանում հագեցած և երջանիկ ուսանողական օրեր: Զինվենք գիտելիքի անսպառ պաշարով և դառնանք հայրենիքի արժանի զավակներ: Վստահ ենք, որ մեր ուսումնառության տարիներին կկարողանանք դառնալ լավ մասնագետներ և կնպաստենք մեր երկրի զարգացմանը յուրաքանչյուրս յուրովի:*

***Անգելինա Համբարձումյան***
***Լրագրություն, 4-րդ կուրս***



*Ուսանողական տարիների ընթացքում մենք կայանում ենք իբրև մասնագետ, դառնում վաղվա Արցախը կերտող քաղաքացիներ: Իմ և իմ ֆակուլտետի բոլոր ուսանողների կողմից ջերմորեն շնորհավորում եմ տոնի առթիվ, յուրաքանչյուրիս մաղթում հաստատուն և լուսավոր ճանապարհ, բարձր առաջադիմություն:*

***Լենա Մուսայելյան***
***Պատմություն, 1-ին կուրս***



# *ԱՇԽԱՐՀԸ ԳԵՂԵՑԿԱՑՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԻ ՄԱՐԴԻԿ*



Ն Ա Ն Ե



Ա Լ Յ Ո Ն Ա

***Նոյեմբերի 7-ը նշվում է որպես բարության միջազգային օր: Օրն առիթ է՝ խոսելու մեր կողքին ապրող այնպիսի մարդկանց մասին, ովքեր բարությամբ են լցնում իրենց շրջապատը՝ գեղեցկացնելով կյանքն ու աշխարհը: Այդպիսի մի մարդու կերպար է բացահայտում լրագրություն 2-րդ կուրսի ուսանողուհի Նանե Հարությունյանը:***

Մառախլապատ եղանակը ծանրացել է հոգուս վրա: Անտրամադիր մտնում եմ լսարան, որտեղ ծանոթ դեմքեր են ու սովորական պատկերներ: Նման պահերին զգում ենք համակուրսեցի Ալյոնայի կատակների ու սրախոսությունների կարիքը: Իսկ նա դեռ չէր եկել:

Երբ դուռը բացվում է, ակամայից շրջվում եմ՝ հուսալով մուտքի մոտ տեսնել ընկերուհուս ժպտերես դեմքը: Ինչպես արևի շողն է ջերմություն բերում մեր սրտերին, այնպես էլ Ալյոնայի ժպիտն է տրամադրում մեզ դեպի լավը: Ոչ միայն իմ, այլև մյուս համակուրսեցիների դեմքերի արտահայտության փոփոխությունը նկատում է նաև նա և անմիջապես մտնում իր դերի մեջ: Անգամ սովորական բարևը նա համեմում է զվարճալի սրախոսությամբ: Համակուրսեցիներից ոչ ոք նրա ուշադրությունից չի վրիպում: Մինչև դասը սկսելը նա հասցնում է բոլորին ուրախ տրամադրությամբ համակել: Նա իր սև մազերով ու հմայիչ արտաքինով առանձնանում է բոլորից, բայց և միաժամանակ նման է բոլորին: Ալյոնան իր համակուրսեցիների ուշադրության կենտրոնում է ոչ միայն ուրախ կատակներով ու զվարճախոսությամբ, այլև իր ակտիվ կենսադիրքով, մարդամոտությամբ, յուրաքանչյուրի հետ լեզու գտնելու արտակարգ ընդունակությամբ: Թվում է, թե նա ի վիճակի է հարմարվել ցանկացած իրադրության և հաղթահարել ամեն մի դժվարություն: Անսահման են նրա խելամտությունն ու բարությունը: Մենք հաճախակի ենք ականատես լինում մեզնից յուրաքանչյուրին օգնելու նրա պատրաստակամությանը: Ալյոնան միաժամանակ հետաքրքիր զրուցակից է, ով պատրաստ է ոչ միայն կարծիքներ փոխանակելու, այլև դիմացինին համբերությամբ լսել մինչև վերջ: Կարծում եմ՝ նրա հետ կարելի է քննարկել ցանկացած թեմա և ամեն մի քննարկումից հետո կատարել անհրաժեշտ հետևություններ: Իր ընկերական շրջապատում նա անվիճելի հեղինակություն է վայելում, և բոլորը ընդունում են նրա օգտակար խորհուրդները: «Առանց Ալյոնայի ես չեմ պատկերացնում, թե ինչպես պետք է հաղթահարել դժվարությունները. դժվարին պահին նա հրեշտակի պես հայտնվում է կողքիս և ելք ցույց տալիս»,- ասում է համակուրսեցի Ալինա Մովսիսյանը:

Ալյոնային ամեն օր նորովի եմ բացահայտում, ինչը, կարծում եմ, պայմանավորված է նրանով, որ մենք համատեղ քննարկելու ընդհանուր թեմաներ ունենք: Անթերի մարդ չի լինում, թերությունները յուրահատուկ են մարդկանց, սակայն դրանք, ինչպես Ալյոնայի պարագայում, խամրում են մարդկային բարձր որակների ու ընկերական ջերմ հարաբերությունների ազդեցությամբ: Համոզված ենք, որ մեր ընկերուհին հրաշալի և վստահելի անձնավորություն է, աշխատասիրության ու նպատակասլացության մարմնացում: Նրա մարդկային որակները դաստիարակել են ծնողները: Հայրը համոզված է, որ իր դուստրը կարդարացնի ծնողների հույսերը: «Աղջիկս պատասխանատվության զգացում ունի և միշտ ձգտում է հավատարիմ մնալ հայրական պատգամներին: Վստահ եմ, որ նա կունենա լավ ապագա, որովհետև նպատակասլաց է ու աշխատասեր»: Մայրն աղջկա մասին խոսելիս հիացմունքից լայն ժպտում է. «Ալյոնաս օգնության է հասնում, երբ դրա կարիքը կա: Նա գիտի ծնողներին հարգել և հանուն նրանց ջանքեր չխնայել»:

***Նանե Հարությունյան***
***Լրագրություն 2-րդ կուրս***

# Ժ Պ Ի Տ  Պ Ա Ր Գ Ե Վ Ի Ր

*Նոյեմբերի 22-ին Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն, լրագրություն բաժնի առաջին կուրսի ուսանողները, Զինաիդա Բալայանի նախաձեռնությամբ, այցելել են սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքի:*

Այցի ընթացքում ուսանողները նյութական աջակցություն են ցուցաբերել ընտանիքին: Տասնմեկ անդամից բաղկացած ընտանիքում մեծանում է ինը երեխա: Ընտանիքի անդամները շատ հուզված էին և շնորհակալ ուսանողներից` գնահատելով այն ներդրումը, որով ուսանողները փորձում են օգնել իրենց և մի ակնթարթ ժպիտ նկարել երեխաների դեմքին: Ուսանողները նշեցին,որ իրենց բարեգործական այցելությունները դրանով չեն սահմանափակվի և շարունակական բնույթ կկրեն: Աստվածաշնչում իզուր չէ հիշատակված, որ այն ամենը, ինչ կկամենաք,որ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց: Ապրենք այս սկզբունքով և փորձենք ժպիտ պարգևել մեր շրջապատում ապրող մարդկանց:

*Մարտա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Լրագրության 1-ին կուրս*

# ԴԻՐՔԸ ՊԱՀՎԱԾ ԷՐ, ԹՇՆԱՄԻՆ` ՈՉՆՉԱՑՎԱԾ

*Նա չի սիրում, երբ խոսում են պատերազմի մասին, առավել ևս` իր անցած ուղուց: Իսկ երբ ինչ-որ հարց են տալիս պատերազմից, նա խոնարհում է իր աչքերը և հոնքերի տակ ծվարած կնճիռները հանգիստ նստում են նրա աչքերին: Մի քանի վայրկյան, ու նա նորից բարձրացնում է աչքերը և այնտեղ` աչքերի խորքում, որը պատերազմի դաշտ է հիշեցնում, սկսում է ինչ-որ արտասովոր բան բոցկլտալ: Ո՛չ, դրանք արցունքներ չեն, այլ վրեժով լցված մի ամբողջություն, որը նրա դեմքին ինչ-որ անծանոթ երանգներ էր տալիս:*



Հանկարծ նա սկսեց քայլել ու, ցույց տալով մի բարձունք, պատմեց.

-Իմ դիրքն է: Ես ու ընկերս պատերազմի ժամանակ երկուսով էինք այստեղ: Գիշերը թուրքերը հարձակվեցին մեր դիրքի վրա: Արկերի ու փամփուշտների տեղատարափ սկսվեց: Փամփուշտներից մեկն էլ կպավ իմ ընկերոջն, ու նա վիրավորվեց: Ես սկսեցի մենակ պայքարել: Դիրքն արդեն շրջափակման մեջ էր: Մի պահ հիշեցի մորս, որ տանը ինձ էր սպասում, ու մտքում ներողություն խնդրեցի նրանից, որ ինձ այլևս չի տեսնելու: Ես վերցրեցի նռնականետը ու սկսեցի կրակել թշնամու ուղղությամբ: Մտքովս անցավ` գուցե վերջին անգամ եմ վերցնում իմ ընկերոջ նռնականետը: Սակայն վախկոտները, որոնք թվով ու տեխնիկայով գերազանցում էին, ետ շպրտվեցին: Քիչ հետո, երբ փոքր-ինչ խաղաղվել էր, օգնության եկան մարտական ընկերներս, ու մի լավ դաս տվեցինք թշնամուն: Դիրքը պահված էր, թշնամին` ոչնչացված:

Նրա ընկերները պատմում են, որ այդ օրը` փետրվարի 1-ը, նրա երկրորդ ծննդյան օրն է: Դրանից հետո, երբ ամենաթեժ դիրքերն էինք բարձրանում, մեկը մյուսի հետ կռվում էին, թե ով պիտի Աբոյի հետ դիրքեր բարձրանա:

-Փետրվարյան այդ մարտերից հետո ինձ օգնության հասած տղաներից մեկը, որպես մատաղ, մի ոչխար էր խոստացել, բայց մինչև այսօր չի տվել,- կատակում է Աբոն:

Նրա կատակի ու ծիծաղի մեջ կա պատերազմից մնացած թախիծ ու անբացատրելի կարոտ: Այդ կարոտը նա ավելի շատ տածում է Ավոյի հանդեպ, ում հետ միասին բախտ էր վիճակվել կռվել: Կռիվներից մեկի ժամանակ էլ Աբոն իր նռնականետով այնքան դիպուկ խփեց թշնամու զրահատեխնիկային, որ Ավոն համբուրեց նրա ճակատը, իսկ հաջորդ օրը մի վերնաշապիկ նվիրեց նրան:

-Դե կռվի ժամանակ վերնաշապիկ նվեր ստանալը թանկ հաճույք էր, ինձ համար կրկնակի հաճելի էր, քանի որ Ավոն էր նվիրողը:

Իսկ երբ Աբոյից հարցնում են, թե ինչու մերժեց ճոխ պաշտոնների ու կոչումների առաջարկը, նա պատասխանում է.

-Ինձ համար ամենաճոխ կոչումն այն է, որ իմ մասին գիտեն ու խոսում են որպես կռված տղայի, դրանից ճոխ էլ ի՞նչ կոչում:

Պատերազմից տարիներ անց Աբոյի դեմքին շատ բաներ են փոխվել, կնճիռներ են առաջացել, մազերն են ճերմակել, բայց չի փոխվել ոչինչ նրա հոգում: Նա նույն հայրենասերն ու ազգասերն է մնացել, ինչպիսին որ կար 30 տարի առաջ:

2016 թվականի պատերազմը տարբերվում էր նրա անցած մյուս պատերազմներից: Այս անգամ հեռավոր դիրքերում իր տղան էր արդեն կրկնում հոր սխրանքները: Այդ սխրանքների մասին հերոսավայել շշուկներ են պտտվում, բայց տղան էլ հոր նման չի սիրում խոսել այդ մասին:

*Արև ԲԱԲԱՅԱՆ,*
*Լրագրություն 3-րդ կուրս*



# ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

*ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն, լրագրություն բաժնի ուսանողները, կուրսղեկ, բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանի գլխավորությամբ, այցելել են Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության հ.1 գիշերօթիկ հաստատություն:*



Ուսանողները հանդես են եկել մշակութային ծրագրով`ասմունքով, երգով, պարով: Զ. Բալայանն ու ուսանողներն իրենց խոսքում նշել են, որ հաստատության բոլոր երեխաները և պատանիները մշտապես գտնվում են իրենց ուշադրության առանցքում: Նաև հույս են հայտնել, որ շատերին տարիներ անց նորից կհանդիպեն` արդեն Արցախի մայր բուհում` որպես ուսանող, և բազմիցս կլսեն նրանց անունները: Գիշերօթիկ հաստատության սաները հանդես են եկել ասմունքով, երգով, պատմել իրենց նախասիրությունների մասին: Վերջում երեխաներին բաժանվեցին ուսանողների կողմից պատրաստված փոքրիկ նվերներ:

*Լուսինե ՕՀԱՆՋԱՆՅԱՆ*
*Հ.լ. և գրակ. 1-ին կուրս*

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ` ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ



*Ուսանողների միջազգային օրվան ընդառաջ ԱրՊՀ ուսանողական խորհուրդը հանդես է գալիս տարաբնույթ նախաձեռնություններով, որոնցից հերթականը միտված էր հանրակացարանաբնակ ուսանողների առօրյայի աշխուժացմանը:*

Հանրակացարանի բակում ուսանողների ուժերով կազմակերպված միջոցառման ընթացքում ուսանողները խարույկի շուրջ հանդես են եկել ազգագրական երգ ու պարով, մշակութաժամանցային խաղ-մրցույթներով:

ՈւԽ նախագահ Դիանա Խաչատրյանի խոսքով` ընթացիկ ուսումնական տարում ուսանողական կառույցներն ակտիվացնելու են մշակութաժամանցային տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը:

«Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատ ժամանցի ճիշտ կազմակերպումը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Հանրակացարանաբնակների համար կազմակերպված միջոցառմամբ մեզ հաջողվել է ազգայինի քարոզմամբ ապահովել ուսանողների ժամանցը` միաժամանակ խթանելով ուսումնառության գործընթացը»,- նշել է ՈւԽ նախագահը:

# ԱրՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

*ԱրՊՀ Իրավաբանական կլինիկան սույն թվականի նոյեմբերի 12-ից շարունակում է իրականացնել իր գործունեությունը և իրավաբանական օգնություն ցուցաբերել ԱՀ բնակիչներին:*

Այս մասին տեղեկացանք ԱրՊՀ իրավաբան, իրավաբանական կլինիկայի աշխատանքները համակարգող Հովհաննես Աբրահամյանից: Նրա խոսքով` կլինիկան կշարունակի անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերել ցանկացած իրավական հարցով դիմող անվճարունակ քաղաքացիներին: Քաղաքացիներին ցուցաբերվող իրավաբանական աջակցությունն իրականացվում է ուսանողների անմիջական մասնակցությամբ և մասնագետ - դասախոսի ու փաստաբան - դասընթացավարի վերահսկողությամբ:

Հավելենք, որ իրավաբանական կլինիկան այժմ իր աշխատանքներն իրականացնում է ԱրՊՀ վարչական մասնաշենքի 1-ին հարկում, երկուշաբթիից ուրբաթ` ժամը 14.00-ից 18.00-ն:

# ԴՈՒ ԺՊԻՏՍ ԱՆԴԱՐՁ ՏԱՐԱՐ



*Վաչիկ Դադայանը սովորում է Արցախի պետական համալսարանում: Իրավագիտություն մասնագիտությամբ բակալավրիատը գերազանցությամբ ավարտելով՝ ընդունվել է նույն մասնագիտության մագիստրատուրան: Ստեղծագործել սկսել է մանկուց: Ապրիլյան պատերազմի օրերին նա շատ ուսանողների նման թողեց ուսումը և զենքը ձեռքին մեկնեց հայրենիքը պաշտպանելու: Այդ օրերի խոհերն ու զգացմունքները հետագայում ծնունդ տվեցին նրա «Խաղաղություն բերողը» գրքին, որը մեծ սիրով ընդունվեց Արցախի երիտասարդ ընթերցողների շրջանում և կարճ ժամանակահատվածում ունեցավ համակիրների մեծ բանակ: Ներկայացնում ենք երիտասարդ ստեղծագործողի բանաստեղծություններից:*

Դու ժպիտս անդարձ տարար,
Հիմա գիտե՞ս՝ էլ չեմ ժպտում:
Էլ չեմ ժպտում քեզ հիշելուց,
Քեզ հիշելուց էլ աչքերս
Արագ-արագ ես չեմ թարթում:
Դու ժպիտս անդարձ տարար
Եվ դրա տեղ դու թողեցիր դեմքիս մկան՝
Անպետք, անտեր, անօգնական:
Իսկ ո՞ւր տարար,
Ինչի՞դ էր պետք իմ ժպիտը առանց տիրոջ,
Առանց տիրոջ նա չի ժպտում,
Առանց տիրոջ այդ ժպիտը
Քո ժպիտին չի հանդիպում:
Դու ժպիտս անդարձ տարար,
Եվ թողեցիր ժպիտը քո դու իմ կողքին,
Բայց նա նույնպես առանց տիրոջ էլ չի ժպտում,
Տիրոջ դեմքին սոսնձվել է ընդմիշտ ուզում:
Խորհուրդ ունեմ՝
Արի՛ փոխվենք ժպիտներով,
Ես՝ քոնը քեզ, դու՝ իմը ինձ,
Փոխվենք գուցե նաև սիրո՛վ,
Ես՝ քոնը քեզ, դու՝ իմը ինձ:

# ԱՄԵՆ ԱՎԱՐՏ ԻՆՉ-ՈՐ ՆՈՐԻ ՍԿԻԶԲ Է, ԵՎ ԱՄԵՆ ՄԻ ԱՆԿՈՒՄ ՆՈՐ ՎԵՐԵԼՔՆԵՐ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ



*Ապրում ես անցյալի մասին հիշողություններով և բաց ես թողնում ներկադ: Այն սահուն կերպով, աննկատ դառնում է ոչ վաղ անցյալ: Վազում ես երջանկության հետևից, շատ ես փնտրում, բայց արդյունքում ոչինչ էլ չես գտնում որպես պատասխան:Եվ ահա մոտ ապագայում պարզում ես հանկարծ, որ թակոց էր եղել քո կյանքի դռան, բայց դու չես լսել այն: Այդ երջանկությունն էր հյուր եկել հանկարծ, որ տաք թեյի շուրջ զրույց ունենաք և գուցե նույնիսկ անժամկետ մտերմանաք... Ապրում ես՝ ապագադ ծրագրելով, և բաց ես թողնում ներկադ:*

Այն կարող էր դառնալ ապահով ապագայի գրավական, սակայն սահուն կերպով, աննկատ դարձավ ոչ վաղ անցյալ: Այն դատարկություն չթողեց, այլ՝ ժամանակ, տարածություն, հնարավորություն: Այն թողեց անկումների և վերելքների խոստումներ, ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ ՈՒ ՍԵՐ:Մի բան վստահ կարող եմ ասել՝ կյանքը հիասքանչ է: Այն հիասքանչ է իր երանգներով, մայրամուտներով, լուսաբացներով, իր բոլոր հրաշքներով: Եվ նույնիսկ ամենադժվար պահին, երբ թվում է, թե ամեն ինչ կորած է, մի փորձիր հանկարծ մտածել, որ կյանքը կորցրել է գույներն իր բոլոր: Քանզի ամեն ավարտ ինչ-որ նորի սկիզբ է, և ամեն մի անկում նոր վերելքներ է խոստանում: Երբեմն պետք են լինում այդ դժվար փորձությունները, որոնք, ցավոք, որոշներին թևաթափ են անում: Սակայն դրանք շատ հաճախ ուժ են հաղորդում՝ նորից փորձելու, նորը ստեղծելու, ամուր ոտքերի վրա հստակ կանգնելու: Դրանք սիրտ են տալիս՝ ավելին սպասելու, աչքեր՝ լույսը տեսնելու:

*Անի Ազատյան,*
*Անգլերեն լեզու և գրականություն, 2-րդ կուրս*



# ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

*Տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվել էր ինտելեկտուալ խաղ, որին մասնակցում էին բոլոր բաժինների տարբեր կուրսերի ուսանողներից կազմված յոթ թիմ:*



Ինտելեկտուալ մրցույթի ժյուրիի կազմում ընդգրկված էին ֆակուլտետի դեկան Ռ. Մանգասարյանը, ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Ն. Ավանեսյանը, նույն ամբիոնի դասախոս Գ. Սարգսյանը, ֆակուլտետի ավագ կուրսերի ուսանողներ:

Դեկան Ռ. Մանգասարյանը կարևորում է ինտելեկտուալ մրցակցության խթանումը՝ նշելով, որ դրանք նպաստում են նաև ուսանողական ժամանցի կազմակերպմանը. «Ժամանակաշրջանը թելադրում է լինել ժամանակի շունչը, որի համար առաջին հերթին պետք է ինտելեկտուալ պոտենցիալ ցուցաբերել»:

Մրցութային փուլերի արդյունքում առաջին տեղ է զբաղեցրել «Նժդեհ» թիմը (ֆինանսներ 1-ին և 4-րդ կուրսի հավաքական), երկրորդ տեղ՝ «Ստվերային տնտեսություն» (ֆինանսներ 2-րդ կուրս) թիմը, երրորդ տեղը՝ «Անտե» (հաշվապահական հաշվառում և տնտեսագիտության տեսություն 4-րդ կուրսի հավաքական) թիմը:

Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը խրախուսվել են պատվոգրերով, մասնակից թիմերը՝ շնորհակալագրերով:

# ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ



*Ուսանողի միջազգային օրվա առթիվ նոյեմբերի 15-ին ԱրՊՀ-ում ՈՒԽ և ՈՒԳԸ համատեղ նախաձեռնությամբ տեղի է ունեցել միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ, որին մասնակցել են բուհի բոլոր ֆակուլտետները ներկայացնող թիմերը: Խաղի արդյունքում հաղթող է ճանաչվել տնտեսագիտության ֆակուլտետի թիմը:*

«Նման միջոցառումները մեծ հնարավորություն են տալիս ուսանողությանը՝ դրսևորելու իրենց ինտելեկտուալ կարողությունները: Այսպիսի միջոցառումներ հաճախակի են կազմակերպվելու ԱրՊՀ-ում: Նախատեսում ենք նաև ստեղծել ինտելեկտուալ ակումբ, որի առաքելությունը կլինի ինտելեկտուալ զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումն ու ավելի շատ ուսանողների ընդգրկումը ինտելեկտուալ խաղերում»,-նշել է ԱրՊՀ ՈՒԳԸ նախագահ Աննա Գասպարյանը:

# ԱՊԱԳԱ ՀՈԳԵԲԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

*Նոյեմբերի 22-ը նշվում է որպես հոգեբանի օր: Օրվա կապակցությամբ «Հոգեբանություն» մասնագիտության ուսանողներն այցելել են Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց, հանդես եկել ընթերցումներով:*




Միջոցառման նախաձեռնող, հոգեբանության ամբիոնի դասախոս Ռոզալիա Հարությունյանի խոսքով՝ նախատեսել են ճանաչողական ընթերցումներով ընդհանուր հոգեբանական գիտելիքներ հաղորդել ավագ դպրոցի աշակերտներին:

«Հոգեբանության վերաբերյալ հետաքրքրաշարժ տեղեկությունների հաղորդմամբ նպատակ ունենք վերհանելու աշակերտների առօրյայում հանդիպող հոգեբանական երևույթներ, ներկայացնելու դրանց շտկման եղանակները»,- նշում է Ռ. Հարությունյանը: